ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-138

Մխիթար Գաբրիելյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի Պետական Համալսարան,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
m.gabrielyan@ysu.am

«ԱԶԳ»-Ի ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-ՈՒՄ (ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԻ «ՀՐԱՏԱՐԱԿՉԻՑ» ԲԱԺՆԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)*

Հիմնաբառեր. ազգ, ազգագրություն, Երվանդ Լալայան, ազգաստեղծում, «Ազգագրական հանդես», ինքնություն, պատմություն:

19-րդ դարը – 20-րդ դարասկիզբը, հաշվի առնելով իրադարձությունների «խտությունն» ու ընդգրկումը, հայոց պատմության կարևոր շրջափուլերից էին, իսկ այս շրջանի հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային փոփոխություններն իրենց բնույթով համակարգային էին: Դրանք ազդում էին հասարակական ինստիտուտների, մշակույթի ենթահամալիրների, ինքնության՝ որպես ամբողջության ու վերջինիս առանձին բաղադրիչների վրա:

Մամուլի, դպրոցների ցանցի, քաղաքական, հասարակական ու մշակութային ինստիտուտների ձևավորմամբ Հայաստանում ևս, գուցե փոքր-ինչ ավելի ուշ, ակտիվանում էին ազգաստեղծման/ազգակառուցման գործընթացները (nation building), որոնք եվրոպական երկրներում ունեին ավելի երկար պատմություն և արդեն սկիզբ էին դրել լուրջ փոփոխությունների ազգային ինքնության ու պետության կարևորության ընկալման և հանուն դրանց մղվող պայքարի հարթություններում:[1]

Նոր տիպի՝ ազգային պետություն ունենալու գաղափարը և դրան ուղղված գործողությունները հեղափոխություն էին ոչ միայն քաղաքականության մեջ: Առանձին գիտակարգեր (պատմագիտություն, փիլիսոփայություն, լեզվաբանություն) «սպասարկում» էին ազգային պետության գաղափարը, հիմնավորում վերջինիս կարևորությունը, դիմում հեռավոր ու ոչ վաղ անցյալի իրադարձություններին՝ «ազգի» և «ազգային պետության» գոյության իրավունքին պատմական լեգիտիմություն հաղորդելու նպատակով:

---

* Ստացվել է 03.05.2023 թ., ուղարկվել է գրախոսման 05.05.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

1 Եզրաբանական խառնաշփոթից խուսափելու համար արձանագրենք, որ ազգ-nation եզրույթի տակ նկատի ունենք վերջինիս այն բովանդակությունը, որ դրված է ազգայնականության տարբեր տեսությունների հիմքում: Հայերենում, ի տարբերություն վերոբերյալի, «ազգ»-ը ավելի լայն և անհամեմատ ավելի վաղ հանդիպող հասկացություն է: Հրաչյա Աճառյանն, ի թիվս այլ իմաստների, ազգը ներկայացնում է որպես «**ցեղ, սերունդ, ազգ, իրերի տեսակը և այլն**» (Աճառյան 1926, 84): Հասկացության բազմաբովանդակությունը խնդիրներ է ստեղծում հատկապես 19-րդ դարի զարգացումները դիտարկող ուսումնասիրություններում:

Ազգերի և ազգայնականության վերաբերյալ ուսումնասիրությունների հեղինակները, տեսական, մեթոդաբանական բնույթի հակասություններ ունենալով հանդերձ, համակարծիք են, որ **ազգայնականությունը (natioanalism) (այս և հաջորդ ընդգծումները հեղինակինն են**) հանրույթների ինքնակազմակերպման նոր մակարդակի ձգտող գործընթաց է, որի խնդիրը պետության՝ որպես ազգային պահանջմունքների բավարարման, ինստիտուտի ստեղծումն է: Հետազոտություններում փաստացի նյութի վերլուծության հիմքի վրա առանձնացվում է ազգային պետության ստեղծման երկու հիմնական կաղապարաձև. «Հանրույթից (տվյալ դեպքում՝ ազգից) դեպի ինստիտուտ» և «ինստիտուտից (ազգային պետությունից) դեպի հանրույթ» (ազգ): Երկու տարբերակն էլ 19–20-րդ դարերում հանդիպում են: Ազգայնականության հայտնի ուսումնասիրող Է. Հոբսբաումը «պետությունից դեպի ազգ» կաղապարաձևը դիտարկելով որպես 19-րդ դարի Եվրոպայի համար կարևոր ու առաջնային, այն ներկայացնում է նույն եվրոպական իրականությունից վերցված հայտնի օրինակով. «Իտալացիների մեծամասնության համար ոչ մի Ռիսորջիմենթո ընդհանրապես գոյություն չուներ, ինչը և ընդունեց Մասսիմո Դ'Ազելոն իր նշանավոր ճառում. «Իտալիան մենք արդեն ստեղծել ենք, այժմ մեզ մնում է ստեղծել իտալացիներին» (Хобсбаум 1998, 72):

Հոդվածի նպատակը վերջին մեկուկես դարի զարգացումները հայ իրականությունում ազգաստեղծման գործընթացների և դրանցում ազգագրության ունեցած դերի համատեքստում դիտարկելն է: Այդ զարգացումները նշանային էին, համակարգաստեղծ: Հայ իրականությունը, հատկապես էլիտայի տարբեր խմբերը փորձում էին նորովի բանաձևել պետությունն ու ազգը, նախանշելով նաև դեպի պետություն և ազգ, լայն առումով՝ դեպի ազգային պետություն տանող ճանապարհները: Այսինքն, գոնե սկզբնապես հայկական իրականությունում վերը նշված երկու կաղապարաձևը գոյություն ունեին միաժամանակ և ազգային պետության կայացման համար կարևոր էր, թե երբ են դրանք հատվելու ու ինչպես, և կամ թե դրանցից որն է ժամանակի ընթացքում դառնալու գերակա:

Հոդվածի աղբյուրագիտական հենքը, չնայած պատմագիտական ու քաղաքագիտական բնույթի հարցադրումներին, պատմագիտական աղբյուրներն ու ուսումնասիրությունները չեն: Վերլուծությունները կառուցվելու են ազգագրական նյութի հիմքի վրա: Այս սահմանափակումը պատահական չէ: Ազգային պետություն կառուցելու կամ «կառուցարկելու» ճանապարհին էլիտաները (քաղաքական, մտավոր, տնտեսական և այլ) հաճախ էին դիմում պատմությանը, անցյալին, ժողովրդական մշակույթին, վերաիմաստավորում այս կամ այն իրադարձությունը: «...Մինչդեռ 18-րդ դարի երկրորդ կեսից և գլխավորապես Գերմանիայի հոգևոր ազդեցության արդյունքում ամբողջ Եվրոպան բռնված էր գյուղացիության սովորական, մաքուր և անաղարտ կյանքի հանդեպ աննախադեպ հետաքրքրությամբ, իսկ «ժողովրդի» բանահյուսական հայտնագործության գործընթացում լեզուն, որով խոսում էր ժողովուրդը, բնականաբար, դուրս եկավ առաջին պլան: Եվ չնայած այս պարզ ժողովրդական մշակութային ռենեսանսը դրեց բազմաթիվ հետագա ազգայնական շարժումների հիմքերը, և այդ պատճառով էլ ոչ առանց փաստարկների համարվում է դրանց զարգացման առաջին փուլը, այնուամենայնիվ, ոչ

այլ ոք, քան Հրոչը հատուկ նշում է, որ այս գործընթացը ոչ մի դեպքում չի համարվում ժողովրդի քաղաքական շարժում...» (Хобсбаум 1998, 72):

Հայաստանում նույնպես հետաքրքրությունը, ուշադրությունը սեփական պատմության ու մշակութային ժառանգության, «գյուղացիության սովորական, մաքուր և անաղարտ կյանքի» հանդեպ երկար պատմություն ուներ, սակայն 19-րդ դարի երկրորդ կեսից այն աստիճանաբար դառնում էր ավելի կազմակերպված ու համակարգված: Երկրաչափական պրոգրեսիայով աճում էր պարբերական մամուլում, այլ աղբյուրներում հրատարակվող ազգագրական ու բանահյուսական նյութերի թիվը: Ժամանակի ընթացքում դրանք դադարում էին զուտ նկարագրական լինելուց: Թղթակցությունների, ուղեգրությունների հեղինակները գյուղական կենցաղը, առօրյան, տոներն ու ծեսերը, ընտանիքը, կնոջը, տղամարդուն ու մանուկին նկարագրելուց զատ ձևակերպում էին կոնկրետ խնդիրներ, որոնց նպատակը ոչ միայն անցյալը, այլ այդ անցյալի օգնությամբ ներկան հասկանալն էր, ըստ այդմ նաև՝ ապագա կառուցելու հնարավորություններ գտնելը: Թերևս այս համատեքստում պետք է դիտարկել նաև այն քննադատությունը (կենցաղի, առանձին ծեսերի ու սովորույթների, առօրեականության, տնտեսության կազմակերպման, երեխաների դաստիարակության և կրթության հանդեպ վերաբերմունքի), որ հանդիպում է ժամանակի պարբերական մամուլի էջերում, գեղարվեստական ստեղծագործություններում:

Զուգահեռ՝ ազգագրական, բանահյուսական նյութերը, ազգագրության ու բանահյուսության միջոցով ազգային մշակույթը ճանաչելուն վերաբերող հարցադրումները կարևոր տեղ էին սկսում զբաղեցնել նաև հայագիտական ուսումնասիրություններում, ձևակերպվում էր նյութերի կազմակերպված ու համակարգված գրառման, դրանցում ավելի մեծ թվով մարդկանց ներգրավելու հարցը:

Նշանավոր հայագետներ Գրիգոր Խալաթյանցը, Գարեգին Սրվանձտյանցը և ուրիշներ ձևակերպում ու փորձում էին իրականացնել գիտության կայացման համար կարևոր հաջորդ քայլը, այն է՝ ազգագրական, բանահյուսական նյութերի գրառման ծրագիր ստեղծելը (Խալաթյանց 1887: Սրվանձտյանց 1978: Նահապետյան 2019):[2] 19-րդ դարի երկրորդ կեսի՝ ժողովրդական մշակույթի ուսումնասիրության ասպարեզի կարևորագույն ձեռքբերումը դարձավ «Սասունցի Դավիթ» էպոսի գրառումը Գ. Սրվանձտյանցի կողմից, ինչն էլ ավելի արագացրեց ազգագրական ու բանահյուսական գիտելիքը գիտական հիմքի վրա դնելու գործընթացները:[3]

---

2 Հոդվածում առաջին ազգագրական հարցարանի ստեղծման ժամանակի և հեղինակի վերաբերյալ հայ ազգագրությունում ծավալված բանավեճին չենք անդրադառնում: Նշենք միայն, որ տարբեր հետազոտողներ «Ազգագրական հարցարան»-ի հեղինակ համարում են Գր. Խալաթյանցին, Գ. Սրվանձտյանցին, կան նաև այլ մոտեցումներ:

3 Էպոսի գրառման պատմությունը Գ. Սրվանձտյանցը ներկայացնում է հետևյալ կերպ. «... այժմ իբրև բուն նյութ այս գրքույկիս պիտի կցորդեմ **Դավիթ Սասունցի** կամ **Մհերի դուռ** վեպը, որ երեք տարի հետամուտ եղա ձեռք բերելու և ոչ ոք գտա որ ամբողջապես գիտենար. մինչև 1873 թ. հունիս ամսոյս՝ Մշո դաշտի Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան վարդապետի միջոցով: Սա կը պատմեր թե յուր վարպետը շատ ընդարձակն գիտե այս պատմության, և թե մեջ ընդ մեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայնով կ՚երգեր: Թե՝ այդ վարպետը երկու վոշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին...» (Սրվանձտյանց 1978, 84–85):

Ազգագրությունը (ազգաբանություն, սոցիալական/մշակութային մարդաբանություն), որ ակտիվորեն զարգանում էր հայկական գիտական միջավայրում, հանրույթների և մշակույթների ուսումնասիրությամբ զբաղվող գիտակարգ էր: Գիտական ավանդույթով, մոտեցումների տարբերություններով պայմանավորված տարբեր միջավայրերում (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ) հանրույթի ու մշակույթի հանդեպ վերաբերմունքը տարբեր էր, ուսումնասիրվում էին անհատի ինքնակազմակերպման տարբեր, հիմնականում ավանդական ինստիտուտներ:

Ի հայտ եկող նոր խնդիրներով պայմանավորված, սակայն, փոխվում էր ազգագրական ուսումնասիրությունների ժամանակագրական ընդգրկումը: 19-րդ դարի երկրորդ կեսի – 20-րդ դարասկզբի դասական մարդաբանական ուսումնասիրությունները (Բրոնիսլավ Մալինովսկի, Մարսել Մոսս, Ֆրանց Բոաս և ուրիշներ) վերաբերում էին հիմնականում «ավանդական», «պրիմիտիվ», «մինչգրային» հասարակություններին (Б. Малиновский, 2004; M. Mocc, 1996): Դրանք հնարավորություն տվեցին բացահայտել ու քարտեզագրել համաշխարհային մշակութային ժառանգության անծանոթ բաղադրիչներ, միաժամանակ հիմք դնելով հասարակությունների ու մշակույթների զարգացման ունիվերսալ, ընդհանրական տեսությունների մշակմանը:

Ժամանակի ընթացքում, սակայն, ակնհայտ դարձավ, որ հասարակությունների ու մշակույթների ամբողջական վերլուծությունը պահանջում է «տեղափոխություն» արդեն հետազոտողի օրեր, «մեր ժամանակներ», որոնք ազգագրական տեսանկյունից պակաս կարևոր չեն, քան ավանդական հասարակությունների «ժամանակները»:

Հայ ազգագրությունը ևս ձևավորվում ու զարգանում էր այս ուղեծրի շրջանակներում: Ազգագրական նյութերն ու դրանց վերլուծություններն արդեն առաջին փուլում ցույց էին տալիս, որ գիտությունը կայանում է ժամանակի լավագույն ավանդույթների ծիրում, ինչը նշանակում էր, որ հիմնական շեշտադրումները նույնպես պետք է լինեն այս դաշտում:

19-րդ դարը – 20-րդ դարասկիզբը, ինչպես տեսանք, ազգաստեղծման շրջան էին, երբ ոչ միայն գաղափարախոսությունները, այլև առանձին գիտակարգեր «սպասարկում» կամ «ուղղորդում» էին ազգաստեղծման գործընթացները:

Ազգագրությունն անդրադառնում էր ազգային նկարագրի, ինքնության, մշակույթի, ծեսերի ու սովորույթների վերաբերյալ տարբեր հարցերի, փորձում դրանց լուծումը ծառայեցնել 19-րդ դարում հայ հասարակության ու մշակույթի առջև ծառացած խնդիրների լուծմանը: Ազգագրական նյութի կուտակումը, մամուլում ու գիտական հանդեսներում հրատարակությունները, առանձին մենագրությունների լույս ընծայումը (Գ. Սրվանձտյանց, Գր. Խալաթյանց) նախապատրաստեցին նաև հայ ազգագրության ինստիտուցիոնալիզացումը:

1896 թ. Եր. Լալայանը Շուշիում հրատարակեց «Ազգագրական հանդես»-ի առաջին հատորը, ինչը ինստիտուցիոնալիզացիայի կարևորագույն գործողութ-

յունն էր:[4] Հանդեսի հրատարակումը սոսկ մեկ գիտակարգի համար չէ, որ կարևոր էր:

Այն հայագիտական, հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտների վրա ազդեցություն ունեցող իրողություն էր, ինչն արտահայտվեց անդրանիկ համարի լույսընծայումը ողջունող նյութերում: «Հանդես ամսօրյա»-ում Հ. Գ. Մեն. անունով հեղինակը, «Մատենախօսական» վերնագրով նյութում գրում է. «Շատ անգամ առիթ ենք ունեցած յորդոր կարդալու թէ յառաջադիմութիւն միայն մասնագիտութեամբ կարելի է, և թէ «ամենաբոյժ» դրութեան շրջանն անցած է: Ահա՛ կ՚իրագործէ Պր. Ե. Լալայեան այս կարևոր կէտը ազգագրութեան մասին»: (Մէն. 1906, 152): Այս ձևակերպմամբ մի կողմից կարևորվում է տարբեր գիտական ուղղությունների համակարգված զարգացման անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ արձանագրվում, որ ազգագրության կայացումն այլևս իրողություն է: Շարունակելով, հեղինակը խնդիրը դիտարկում է ազգային մշակութային ժառանգության փրկության համատեքստում, արձանագրելով անմխիթար վիճակն ու վտանգները, որոնց բախվում է ազգային մշակույթը. «Ինչպիսի գանձեր կ՚ունենայինք եթէ դար մը յառաջ այսպիսի ուղղութեամբ «Հանդէս» մը ունեցած ըլլայինք. այո՛ դար մը իսկ բավական է համոզելու թէ որպիսի՛ է կորուստը: Բայց ունինք գոնէ այս մխիթարութիւնը թէ այսպիսի ժամանակ մը, ուր մէկ տարւոյ կորուստը՝ նախնի 20–30 տարիներու պատճառած կորստեան հաւասար է, ունեցանք «Ազգագրական Հանդէս» մը, որ իւր ուղղութեամբը պիտի կարենայ ազատել գոնե եղածը» (Մէն. 1906, 152–154): Ձևակերպումն ի ցույց է դնում իրավիճակը, որն առկա էր և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանում. ազգային մշակույթի տարրերի արագացող կորուստ, երբ տարբեր իրողություններով պայմանավորված, 1 տարվա կորուստն արդեն հավասար է 20–30 տարվա:

«Ազգագրական հանդես»-ի՝ ինստիտուցիոնալ, համակարգային լուծում լինելու մասին վկայում են այլ նյութեր ևս: «Անահիտ» հանդեսի անդրադարձներից մեկն այս համատեքստում է. «Ազգագրական հանդէսը մասնագիտական հրատարակութիւն մըն է, որ եկաւ մէկ քանի տարիներէ ի վեր կարևոր պակաս մը լէցնել հայ մամլոյն մէջ: Պ. Լալաեանց որ իր ուսումնասիրութիւնները կատարած է ի Բարիզ, կը վարէ այդ հանդէսը գիտակից մտքի մը ձեռնհասութեամբ: Ինչ որ Սրուանձտեանցներ, Տիգրանեանցներ, Պոռշեանցներ սկսած էին հաւաքել անգիտակցաբար, հեքեաթները, երգերը, ինչ որ ՀԱՅ գոյնը կը կազմէ աշխարհիս մէջ հնուց մինչև այսօր: Պ. Լալայեանցի խնամքով այդ բոլորը կը ժողուի **մէթոտով**, կը դասաւորուի և քննութեան կ՚ենթարկուի: Բաց ի գիտական կարևորութիւնէն, այդ աշխատութիւնը ինծի համար ամենէն էական նպաստն է հայ գրականութեան մէջ ազգային դրոշմին ճոխացմանը. գրականութեան մը հիմը գիւղն է, իր երգերով, իր աւանդութիւններով, իր բնական բանաստեղծութեամբը. առանց անոր, գրականութիւնը, արուեստականօրէն արտադրուած, նման կ՚ըլլայ ծովի վրայ ծածանող

4 Բազմաթիվ արձագանքները, գրախոսությունները, կարծիքները վկայում են, որ հանդեսն իրոք սպասված էր ու եկել էր լրացնելու մշակույթի ուսումնասիրության կարևոր բացերից մեկը:

բոյսերուն, որոնց արմատը հողի մէջ չի մտներ, և որոնք անիմաստ ու խախուտ հրապոյր մը ունին միայն...» (Չօպանեան 1899, 180–181)։ «Ազգագրական հանդես»-ին այլ անդրադարձները նույնպես քննության են առնում վերջինիս գիտական կարևորությունը և ազգային մշակույթի ուսումնասիրության հարցերին բերած ավանդը։

Ազգային մշակույթի և ինքնության ուսումնասիրության դաշտում անելիքի ամբողջական ձևակերպումը, սակայն, լավագույնս տվել է հենց հանդեսի հիմնադիրը՝ Եր. Լալայանը պարբերականի առաջին հատորում, «Հրատարակչից» 2 էջանոց տեքստում. «Այսօր մենք հանդէս ենք գալիս ոչ թե միայն մեր ուժի վրայ վստահացած, այլ ազգի ինքնաճանաչողութեան զգացման։ Թերթերի մէջ սփռուած և առանձին լոյս տեսնող ազգագրական յօդուածներն արդէն ապացուցանում են, որ Հայոց ազգն էլ վերջապես զարթել է խոր քնից և ցանկանում է կատարել գիտութեան ամենիմաստ խօսքը «Ծանիր զքեզ». նա կամենում է ճանաչել իրեն և իւր ազգային յատկութիւնների վրայ հիմնել ազգային զարգացումը։ Մեր այս գործն այդ զգացման արդիւնք է և մեր կոչումը՝ այդ գործին գիտական ողղութիւն տալ և աշխատողների մէջ միութիւն հաստատել» (Լալայեան 1896, 5)։

Ինչու՞ ենք մենք «Հրատարակչից» ընդամենը երկու էջանոց այս տեքստը դիտարկում հենց որպես «ազգ» հասկացության կամ երևույթի գիտական ուսումնասիրության ուղեցույց-ծրագիր։

Ազգագրությունը (սոցիալական/մշակութային մարդաբանություն), անկախ տարբեր գիտական դպրոցների մոտեցումների տարբերությունից, կարևոր ուշադրություն է դարձրել ազգագրական նյութի գրառման գիտական սկզբունքներին, դրանց նկարագրության, վերլուծության, համեմատության ու ընդհանրացման մեթոդներին։ Սա գիտության համար այբբենական ճշմարտություն է։ Եր. Լալայանի՝ վերը բերված դիտարկումը ցույց է տալիս, որ նախընթաց զարգացումները, հայագիտական հետազոտությունների ակտիվ ծավալումը ռուսական, եվրոպական տարբեր կենտրոններում, հայագիտական կարևոր հայտնագործությունները՝ զուգորդված 19-րդ դարի զարգացումների հետ (գրագիտության տարածում, պարբերական մամուլ, դպրոցների ցանցի ձևավորում և այլն), ըստ էության նախապատրաստել էին անցումը ազգագրական նյութի կուտակման փուլից դեպի վերջինս գիտական գիտելիքի վերածելու փուլ։ Հենց այս պատճառով է հեղինակը պնդում, որ արդեն կան հիմքեր և դրանք այն նյութերն են, որ կուտակված են մամուլի էջերում, տարբեր հրատարակություններում։

Հայերիս դեպքում ազգագրական նյութերը միայն պարբերական մամուլով չէին սահմանափակվում։ Հայագիտության զարգացումը բերել էր նրան, որ հայ պատմիչների երկերի աշխարհաբարով հրատարակությունները, օտար պատմիչների աշխատությունների թարգմանությունները նույնպես շրջանառության մեջ էին դնում հայկական մշակույթի, տոների, ծեսերի, սովորույթների, հավատալիքների վերաբերյալ շատ հետաքրքիր ու կարևոր նյութեր։ Այսինքն, «Ազգագրական հանդես»-ի հրատարակումով Եր. Լալայանը լուծում էր թերևս ամենակարևոր՝ ինստիտուտի, համակարգի ստեղծման խնդիրը՝ հանդեսը դարձնելով յուրօրինակ ազգագրական համալսարան, քննարկումների, բանավեճերի, նոր մտքերի ու գա-

ղափարների ներկայացման հարթակ, ի վերջո այդ ամենը հանգեցնելով «ծանիր զքեզ» բանաձևին, որը ամենակարևոր է ինքնաճանաչողության գործընթացում:

Հաջորդ համառոտ ձևակերպումը, որին մինչ օրս բավարար ուշադրություն չի դարձվել, «ազգ»-ի ու ազգային մշակույթի ուսումնասիրության համատեքստում և որը շատ կարևոր շեշտադրումներ է պարունակում, հետևյալն է. «Նա կամենում է ճանաչել իրեն և **իր ազգային յատկութիւնների վրայ հիմնել ազգային զարգացումը**» (Լալայեան, 1896, 5): Եթե նախորդ միտքը նյութի կուտակումից – գիտություն անցման հիմնավորումն էր, այս արտահայտությունը, ըստ էության, ազգի գիտական ուսումնասիրության բանաձև է:

Վերը տեսանք, որ 19-րդ դարում «ազգ»-ի ուսումնասիրություններում կարևոր էր անդրադարձը սեփական պատմությանը, ազգաստեղծման կայացման գործընթաց այդ պատմության տարբեր դրվագների ինտեգրմանը, որոշ դրվագների նորովի վերաիմաստավորմանը նոր խնդիրների պայմաններում, ըստ անհրաժեշտության՝ ազգային պատմության առանձին շրջափուլերի կառուցարկմանը: Եր. Լալայանն էլ, ըստ էության, ինքնաճանաչողությունն է դիտարկում որպես ազգային զարգացման կարևոր նախապայման, շեշտելով, որ այն պետք է կառուցված լինի ազգային հատկությունների հիմքի վրա:

Հայտնի ազգագրագետի, ժամանակի թերևս ամենալայնախոհ մտածողներից մեկի տեսական ու մեթոդաբանական այս մոտեցումները պատահական չեն: Եվրոպական լավագույն կրթությունը, շփումները առաջադեմ մտքի ներկայացուցիչների հետ Եր. Լալայանին նախապատրաստել էին ազգի ու ազգային զարգացման այս գաղափարները կիրառելու համար: Մյուս կողմից Հայաստանում աշխատանքը, ուսուցչությունը տարբեր քաղաքներում (Շուշի, Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ) (Եր. Լալայան, 1983, 7–8), ծանոթությունը ժողովրդական մշակույթին (լավ և վատ, ընդունելի և պախարակելի) ավելի էին խորացնում հեղինակի այն համոզումը, որ ազգային զարգացում հնարավոր է ապահովել ինքնաճանաչողության ու ըստ այդմ միայն ազգային զարգացման ուղին նախանշելու միջոցով:

Եր. Լալայանի գործունեության առավելություններից մեկն այն էր, որ լինելով անսպառ եռանդի տեր, նա չէր բավարարվում սոսկ խնդիրների արձանագրումով, այլ հստակ և որոշակի ցույց էր տալիս դրանց լուծման ուղիները: Այս հարցում էլ նրան օգնության էր գալիս եվրոպական կրթությունը և եվրոպական երկրներում ազգագրության դրվածքի իմացությունը: Եվրոպայում 19-րդ դարի երկրորդ կեսին ազգային մշակույթի ուսումնասիրության խնդիրը լուծվում էր ամենաբարձր մակարդակով, կայսրերի, թագավորների ու իշխանների հովանու ներքո տարբեր հետազոտական կենտրոններ, ընկերություններ հիմնելով, տեղերում դրանց մասնաճյուղերի գործունեությունը խրախուսելով: Ցարական Ռուսաստանը նույնպես ակտիվ գործունեություն էր ծավալել այս ուղղությամբ: Հիշատակելի է հատկապես Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի (ռուս.՝ Кавказское Отделение Императорского Российского Географического Общества) գործունեությունը, որի հրատարակած մի քանի տասնյակ հատորները մինչ օրս կովկասյան տարածաշրջանի պատմության, մշակույթի, ազ-

գագրության, երկրաբանության ու աշխարհագրության ուսումնասիրության սկզբնաղբյուրի կարևորություն ունեն[5]:

Այլ հարց է, որ շատ հաճախ ազգային մշակույթները ուսումնասիրվում էին՝ ելնելով կայսերական քաղաքականության խնդիրներից ու շահերից, մետրոպոլիայի դիրքերից, բայց միևնույն է, ազգային մշակույթների ուսումնասիրությունն ինքնին առաջընթաց էր:

Եր. Լալայանի՝ «Հրատարակչից»-ում ձևակերպված մոտեցումն առնվազն մեկ քայլ առաջ էր, քանի որ ազգային մշակույթի, ազգային մշակույթի միջոցով ինքնաճանաչողության հարցերի լուծումը նա պատվիրակում էր ազգային մտավորականության ներկայացուցիչներին՝ դարձյալ հարցերը դիտարկելով ինստիտուտների ու համակարգերի մակարդակում: Սրա ապացույցը «Հրատարակչից»-ի ևս մեկ կարևոր հատվածն է. «Մենք չենք խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ձեռնարկութիւնն անհատական գործ չէ և սոսկ մինի տաղանդից չէ կախուած. ազգի ուսումնասիրութիւնն ամբողջ առաջաւոր դասակարգի գործն է... հրաւեր ենք կարդում Հայոց գրականութեան Մշակներիդ և Ձեզ, Հայ Ուսուցչուհիներ և Ուսուցիչներ, որ սիրով յանձն էք առել Հայ ժողովրդի կրթութեան գործը: Ձեր իսկ գործի յաջողութեան և ազգային ինքնուրոյնութիւնն պահպանելու փափագով՝ իւրաքանչիւրդ ձեր միջավայրը ներկայացնելու նեղութիւնն յանձն առեք» (Լալայեան, 1896, 5–6):

Ազգագրության հետագայի զարգացումները ցույց տվեցին, որ հենց ինստիտուտները նպաստեցին գիտության կայացմանն ո զարգացմանը, իսկ ինքը՝ Եր. Լալայանը տարիներ անց նույն ասպառ եռանդով ձեռնամուխ եղավ հայ ազգագրության նոր ինստիտուտների ստեղծմանը. «Ազգագրական հրատարակչական ընկերություն» (1900 թ.), որ 1906 թ. դարձավ «Հայոց ազգագրական ընկերություն»: Մեկ տասնամյակի ընթացքում ստեղծված այս ինստիտուտները, միմյանց շարունակելով ու փոխադարձաբար միմյանց լրացնելով, ըստ էության, ապահովեցին հայ ազգագրության զարգացումը 20-րդ դարի առաջին երեսնամյակում, էական ազդեցություն ունենալով նաև հետագա տասնամյակների զարգացումների վրա:

Լավագույն կրթությունն ու ազգային մշակույթի համակողմանի իմացությունը Եր. Լալայանին բացառիկ ազատ ու անկեղծ էին դարձնում ազգային մշակույթի հանդեպ իր վերաբերմունքում. «Դէհ ուրեմն, հայ ժողովուրդ, բաց սիրով մեր առաջ քո սիրտն ու հոգին, թող՛ որ մէնք թափանցենք քո ներքին կեանքի մէջ և պատկերացնենք քեզ ինչպէս որ ես, քո ախտերիդ նկարն անգամ կարող է քեզ բարիք բերել» (Լալայեան 1896, 5–6):

Քսաներորդ դարը մարդաբանական նոր գիտակարգերի առաջացման, միջգիտակարգային ուսումնասիրությունների շրջան է: Եր. Լալայանը, բացառիկ նրբանկատությամբ կարծես կանխատեսել էր նաև գիտության զարգացման նման ընթացքը. «... մեր հանդէսը կը դառնայ ժողովրդական կեանքի մի ճշմարիտ հայե-

5 Խոսքը «Записки Кавказского отдела Императорского Российского Географического Общества» (1852–1913) և «Известия Кавказского отдела Императорского Российского Географического Общества» (1872–1917) շարքերի մասին է, որոնց տարբեր հատորներում արժեքավոր նյութեր կան նաև հայերի մասին:

լի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իւր նիւթը կը վերցնէ ազգային վէպ ստեղծելու, լեզուաբանը՝ բառեր և ոճեր կը քաղե՝ ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու, հրապարակախոսն և հոգևորականն ազգի վէրքերը կը նկատեն, նրանց դարմանումը քարոզելու, բժիշկը՝ նրա ցաւերը կը տեսնէ՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կեանքը կ՛ըմբռնե այն բարեփոխելու...» (Լալայեան, 1896, 5–6): Այս ուղղորդումները, որ վերաբերում են ազգագրական նյութի ուսումնասիրության, վերլուծության, ընդհանրացման վերաբերյալ տարբեր մասնագետների անելիքներին, հետագայում իրենց ավելի կոնկրետ ձևակերպումները պետք է ստանան այնպիսի նոր գիտակարգերում, ինչպիսիք են լեզվաբանական մարդաբանությունը, մանկության ազգագրությունը, մանկավարժական ու բժշկական մարդաբանությունը և այսպես շարունակ: Այսինքն, իր մոտեցումները մի կողմից՝ իր ժամանակի տեսությունների, մյուս կողմից՝ ազգագրական նյութի գրագետ ու մասնագիտական գրանցման սկզբունքի վրա կառուցող մեծավաստակ գիտնականը ըստ էության նախանշում էր նաև գիտության զարգացման հետագա ընթացքը, երբ ազգային մշակույթի ու ընդհանրապես մշակույթների ուսումնասիրությունը պետք է իրականացվեր տարբեր գիտակարգերի ներկայացուցիչների ջանքերով՝ սկիզբ դնելով նոր գիտական ուղղությունների ու մասնագիտական հարցադրումների:

Եր. Լալայան ազգագրագետը հստակ պատկերացնում էր նաև գիտության զարգացման գործում տեսության, մեթոդի ու մեթոդաբանության կարևորությունը: Հայաստանը իմանալով, գյուղացու ու քաղաքացու, առևտրականի ու մանկավարժի խնդիրներին փայլուն տիրապետելով, նա տեսնում էր, որ առանց բավարար պատրաստության նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում գյուղական ուսուցիչներն ու մտավորականության տեղական ներկայացուցիչները չեն կարողանալու լուծել ազգագրական ու բանահյուսական նյութի գրառման խնդիրը, իսկ գործն ուշացնելու ժամանակ արդեն չկար, որովհետև օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, ազգային մշակույթի բազմաթիվ տարրեր ուղղակի դուրս էին մղվում կենցաղից, ժամանակի ընթացքում ջնջվում հիշողությունից: Եթե սրանց գումարենք ռուսական ու թուրքական քաղաքականության բացասական ազդեցությունները, ակնհայտ է դառնում, որ ժողովրդական մշակույթը, որի ուսումնասիրությունը ազգագրության իրապես կարևորագույն խնդիրն է, լուրջ փոփոխությունների, երբեմն նաև ձևախեղումների գործընթացում էր: Եր. Լալայանի այս կոչ-հորդորից ընդամենը երկու տասնամյակ անց, 1915 թ. Ցեղասպանությամբ թուրքերը վերջ դրեցին ոչ միայն ազգային մշակույթին պատմական հայրենիքի տարածքի մի հսկայական մասում, այլ ըստ էության նվազագույնի հասցրեցին այդ մշակույթի ուսումնասիրության հնարավորությունները, Ցեղասպանությունը շարունակելով արդեն որպես մշակութային Ցեղասպանություն ու ժամանակի ընթացքում ջնջելով հայկականության բոլոր հետքերը հայկական սոցիալ-մշակութային լանդշաֆտում՝ Հայկական լեռնաշխարհում:

Պատահական չէ, որ այս վտանգները հաշվի առնելով ու հնարավոր զարգացումները գիտակցելով, նա տալիս է ինստիտուտների կայացման տեսանկյունից կարևոր հաջորդ բանաձևը. տեսական ու մեթոդաբանական գրագիտության

ապահովում. «Մենք կ՛առաջնորդենք Ձեզ նախ ծրագիրներ տալով և երկրորդ՝ մեր հանդիսի երկրորդ մասում մարդաբանական յօդուածներ տպելով՝ կը ծանօթացնենք Ձեզ, թէ ինչի՞ վերայ աւելի ուշք պիտի դարձնէք և ինչպէս պիտի հաւաքէք: Մեր կոչումն այժմ միայն նիւթեր հաւաքելն է, որովհետև դրանց պակասութեան պատճառով գիտական ուսումնասիրութիւններն անհնարին են, և մեկ էլ դրանց համար ժամանակ չի պակասիլ: Մենք կը կրենք քարերը և երանի նրան, ով կը գայ այդ քարերով ազգային ինքնուրոյնութեան շէնը կառուցանելու և համամարդկային էվոլիւսիօնի օրէնքները գծելու» (Լալայեան, 1896, 6):

Այսպիսով, Հայ ազգագրության երախտավորը ընդամենը երկու էջանոց տեքստում, կարողանում է ոչ միայն ուրվագծել ազգագրության վիճակը, այլ ձևակերպել այն խնդիրները, որ պետք է լուծվեն ազգային մշակույթի ամբողջական պատկերն ունենալու համար:

Փորձի, կրթության ու տեսլականի համադրմամբ Եր. Լալայանը շատ որոշակի ցույց է տալիս նաև գիտության զարգացման ճանապարհը. այն է ունենալ կադրեր, ստեղծել ինստիտուտներ, որոնք թույլ կտան ավելի արդյունավետ ու կազմակերպված դարձնել ազգագրական գործունեությունը Հայաստանում:

Ինքը՝ Եր. Լալայանը իր կյանքի հաջորդ տասնամյակների ընթացքում ևս շարունակեց հավատարիմ մնալ այս սկզբունքին, հիմնելով հայ ազգագրության կայացմանը մեծագույն նպաստ բերած հաջորդ ինստիտուտները՝ Հայոց ազգագրական ընկերությունը և Պատմության թանգարանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՃԱՌՅԱՆ 1926 – Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Հատոր 1, Երևան, 1926:

ԼԱԼԱՅԵԱՆ 1896 – Լալայեան Եր., Հրատարակչից, «Ազգագրական հանդէս», Առաջին տարի, Գիրք Ա, Շուշի, 1896 էջ 5–6:

ԼԱԼԱՅԱՆ 1983 – Լալայան Եր., Երկեր, Հատոր I, Երևան, 1983:

ԽԱԼԱԹԵԱՆՑ 1887 – Խալաթենաց Գր., Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների, Մոսկուա, 1887:

ՄԷՆ. 1906 – Մէն. Հ. Գ., Մատենախօսական, «Հանդէս ամսօրեայ», թիվ 5, էջ 152–154:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2019 – Նահապետյան Ռ., Ազգաբանական ուսումնասիրություններ 2. Հայ ազգագրության պատմություն (XVIII դ. երկրորդ կես–1980-ական թթ.), Երևան, 2019:

ՉՕՊԱՆԵԱՆ 1899 – ՉՕՊԱՆԵԱՆ Ա., «Մուրճը» և ռուսահայ արդի գրականութիւնը, «Անահիտ» հանդես, Փարիզ, 1899, թիվ 5–6, էջ 180–181:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ 1978 – Սրվանձտյանց Գ., Երկեր, Հատոր 1, Երևան, 1978:

МАЛИНОВСКИЙ 2004 – Малиновский Бр., Избранное: Аргонавты западной части Тихого океана, Москва, 2004.

МОСС 2006 – Мосс М., Общества, обмен, личность, Москва, 2006.

ХОБСБАУМ 1998 – Хобсбаум Э., Нации и национализм после 1780 года, Санкт -Петербург, 1998.

Mkhitar Gabrielyan
PhD in History, associate preofessor,

Yerevan State University
Institute of Archaeology and Ethnography NAS RA
m.gabrielyan@ysu.am

THE FORMULAS FOR RESEARCHING CONCEPT OF "NATION" IN THE "JOURNAL OF ETHNOGRAPHY"

Keywords: nation, Ethnography, Yervand Lalayan, ethnographic journal, identity, history, national culture.

"Ethnographic Journal" founded in 1896 plays an important role not only in terms of recording, description and analysis of ethnographic materials, but also for the establishment and further development of ethnography in Armenia.

Publisher of the journal Yervand Lalayan had formulated the state of the study of Armenian ethnography, identify the problems of national culture in a two-page introductory article entitled "From the Publisher" of the first issue of the journal.

Y. Lalayan was not just identifying, recording the problems, but also suggesting solutions as we can follow in the discussed document. His suggestions were well diversified, such as education, linguistics, folklore and other fields where ethnographic materials should be incorporated to achive better results.

European education and familiarity with Armenian reality gave Y. Lalayan the opportunity to predict the main directions of the development of science, to outline new research themes. And indeed, not only Armenian ethnography, but anthropology in general developed through the creation of new disciplines and the active development of interdisciplinary research since the beginning of 20th century.

And finally, in order to ensure the theoretical-methodological principles, Y. Lalayan announced about willingness to translate anthropological articles and publish them in the "Ethnographic Journal."

Considering all these, the two pages introduction of the journal could be described as one of the important documents of Armenian ethnography, a unique program-guide for the research of the concepts of "nation" and "national culture."

Мхитар Габриелян
Кандидат исторических наук, доцент

Ереванский Государственный Университет,
Институт Археологии и Этнографии НАН РА
m.gabrielyan@ysu.am

ФОРМУЛЫ НАУЧНОГО ИССЛЕДОВАНИЯ «АЗГ»-А В ПЕРВОМ НОМЕРЕ «ЭТНОГРАФИЧЕСКОГО ЖУРНАЛА» (АНАЛИЗ МАТЕРИАЛА «ОТ ИЗДАТЕЛЯ»)

Ключевые слова: нация, этнография, Ерванд Лалаян, «Этнографический журнал», история, идентичность, национальная культура.

Основанный в 1896 г. журнал «Азгагракан андес» («Этнографический журнал») сыграл важнейшую роль не только в деле сбора этнографического материала, ее описания и анализа, но и в процессах становления этнографии и ее дальнейшего развития.

В первом номере журнала, всего в двухстраничном материале, заглавленном «От издателя», Ерванд Лалаян смог проанализировать состояние армянской этнографии, выявить стоящие перед наукой основные проблемы.

Исключительным качеством Ер. Лалаяна – этнографа считалось его умение не только сформулировать задачи, но и предложить конкретные, реальные механизмы их решения. Такой подход он проявил в указанном документе, фактически представляя решения по всем направлениям развития этнографической науки.

Так, с учетом факта, что в Армении в конце 19-ого не было достаточного количества профессиональных этнографов, он обратился к педагогам, предложив им занятся сбором этнографичеких материалов и таким образом внести свою лепту в процесс исследования национальной культуры.

В другой части анализируемого материала он указал те основные отрасли научного знания, где этнографический материал сможет сыграть важную роль: образование, методы воспитания, лингвистика, фольклор и др.

Европейское образование и блестящее знание армянской действительности помогли Ер. Лалаяну также предсказать основные направления и тенденции развития армянской этнографической науки, образования новых научных дисциплин. Удивительно, что на самом деле развитие армянской этнографической науки в 20-ом веке шло именно в этом направлении: новые научные дисциплины, междисциплинарные исследования.

И наконец, придавая бажное значение теории и методологии науки, он взял на себя обязательство перевести и представить в «Этнографическом журнале» антропологические статьи, касающиеся также принципам сбора этнографического материала.

С учетом сказанного, мы предлагаем рассматривать документ «От издателя» как одним из важных в арманской этнографии, своего рода программу исследования «азг»-а (нации) и национальной культуры.